



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Թիվ 132

09. դեկտեմբերի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝
Ա. Ս. ՂԱՀՐԱՍՏԱՆՅԱՆԻՆ

Ի կատարումն « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի՝ Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկական համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 40-Ն որոշումը
Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փարձաքննության:

Առդիր 160 թերթ

Հայկական համայնքի ղեկավար



Ռ. Ղազարյան

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒԹՅԱՆ
Ստեղծվել է
12 12 2016 թ.
112.23/14095-16



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«09» դեկտեմբերի 2016թ.

թիվ 12 նիստ

թիվ 40-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկական համայնքի 2017թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 32506,4 հազար դրամ, ծախսերի գծով՝ 32506,4 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի / պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելով վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 30 տոկոսը:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Մ. Դավթյան

Ա. Մանուկյան

Մ. Ստեփանյան

Լ. Եպիսկոպոսյան

Հ. Հակոբյան

Ա. Նավասարդյան

Ռ. Ավետիսյան

Կողմ

դեմ

ծեղնապահ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով Ձեր քննարկմանն է ներկայացվում Հայկական համայնքի 2017 թվականի բյուջեն:
 Հայկական համայնքի 2017 թվականի բյուջեն կազմվել է համայնքի ղեկավարի քառամյա ծրագրի դրույթներին համապատասխան:

ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

Հայկական համայնքի 2017թ.բյուջեով կանխատեսվել են եկամուտներ՝ ընդամենը 32506,4 հազար դրամ:

Հայկական համայնքի 2017թ բյուջեով սեփական եկամուտները կանխատեսվել է 11906,8 հազար դրամ: Պետական բյուջեից տրվող դոտացիան՝ 20062,7 ազար դրամ:

2017թվականին հարկերի գծով նախատեսվել է 319,8 հազար դրամ, շենք . շին. գույքահարկ, 7760,0հազար դրամ հողի հարկ և 3657,0հազար դրամ փոխադրամիջոցների գույքահարկ:

Կանխատեսման համար հիմք է հանդիսացել գույքահարկի և հողի հարկի հաշվարկման և գանձման հաշվարկները: Գույքահարկը կանխատեսվել է նախորդ տարիների կուտակված պարտքերից 40.0 հազար դրամ ավելացրած՝ հաշվի առնելով գանձելիության մակարդակը: Հողի հարկը կանխատեսվել է նախորդ տարիների պարտքերից 101,0 հազար դրամ ավելացրած:

Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարների գծով՝ տեղական տուրքեր նախատեսվել է 170 0 հազար դրամ:

Պաշտոնական դրամաշնորհների գծով՝ դոտացիա 20062,7հազար դրամ հիմք՝ «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը:

Այլ եկամուտների գծով նախատեսվել է 536,9 հազար դրամ,որից հողի վարձակալությունից 36,9հազար դրամ, օրենքով սահմանված դեպքերում համայնքային տեղական տուրքերի գանձման մատուցվող ծառայությունների համար 500,0 հազար դրամ:

Եկամուտները ըստ եկամտատեսակների՝ կից հատված 1-ին համապատասխան՝ կից տեղեկություններ: Նախորդ 2015 թվականի փաստացի կատարված 2016 թվականի հաստատված և 2017 թվականի կանխատեսվող եկամուտների համեմատականը կցվում է / համեմատական 1/:

ԾԱԽՍԵՐ

Հայկական համայնքի 2017 թվականի բյուջեով ծախսերը նախատեսվել են՝ ընդամենը 32506,4 հազար դրամ:

Այդ թվում՝ ընթացիկ ծախսերի գծով 32506,4 հազար դրամ:

Հայկական համայնքի 2017 թվականի բյուջեով նախատեսված ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման կցվում է /հատված 2,3,6/ Համայնքի 2017 թվականի բյուջեի ծախսերը հաշվարկելիս առաջնորդվել ենք 2015.թ բյուջեի փաստացի կատարված, 2016թ հաստատված և 2017թ. սպասվելիք ծախսերով:

ԾԱԽՍԵՐԸ ԲԱՇԽԿԵԼ ԵՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

01 բաժին ընդամենը ծախսեր 17879,1 հազար դրամ, այդ թվում 01 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ» ծրագրով նախատեսվել է 16614,1 հազար դրամ:

01 բաժին 3 խումբ 3 դաս՝ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 115,0 հազար դրամ՝ համակարգչային ծառայությունների համար:

01 բաժին 6 խումբ 1 դաս՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ ծրագրով նախատեսվել է ծախսեր՝ 1150 Օ հազար դրամ:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

05 բաժին ընդամենը ծախսեր 3187,9 հազար դրամ, այդ թվում 05 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Աղբահանում» ծրագրով 3187,9 հազար դրամ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

06 բաժին ընդամենը ծախսեր 3700,0 հազար դրամ, այդ թվում 06 բաժին 3 խումբ 1 դաս՝ «Ջրամատակարարում» ծրագրով 3700,0 հազար դրամ:

ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒԹ ԵՎ ԿՐՈՆ

08 բաժին ընդամենը ծախսեր 3407,9 հազար դրամ, այդ թվում 08 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Հանգստի և սպորտի ծառայություններ» ծրագրով 500,0 հազար դրամ:

08 բաժին 2 խումբ 3 դաս՝ «Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ» ծրագրով 1807,9 հազար դրամ:

08 բաժին 2 խումբ 4 դաս՝ «Այլ մշակույթային հիմնարկներ» ծրագրով 1100,0 հազար դրամ: Այս ծրագրում ընդգրկվել են համայնքային մշանակության միջոցառումների գծով ծախսերը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

09 բաժին ընդամենը ծախսեր 640,0 հազար դրամ, այդ թվում 09 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Նախադպրոցական կրթություն» ծրագրով նախատեսվել է 640,0 հազար դրամ:

Այս ծրագրով նախատեսել Հայկականի միջնակարգ դպրոցի նախակրթարանը համաֆինանսավորել 2017 թվականին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

10 բաժին 7 խումբ 1 դաս՝ «Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ ծրագրով նախատեսվել է 1470,0 հազար դրամ:

Այս ծրագրում ընդգրկվել են սոցիալապես անապահով խավերին մասնակի օգնություն տալու համար ծախսերը:

Օգնությունները տրվում են՝ համայնքի ավագանու որոշմամբ՝ քաղաքացիների դիմումների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉՂԱՍԿՈՂ ՊԱՅՈՒՄՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ

11 բաժին ընդամենը ծախսեր 2221,5 հազար դրամ, այդ թվում 11 բաժին 1խումբ
2 դաս՝ «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» 2221,5 հազար դրամ:
Նախորդ 2015թվականի փաստացի կատարված, 2016 թվականի հաստատված
և 2017 թվականի նախատեսված ծախսերի՝ գործառնական և
տնտեսագիտական դասակարգման, դիֆիցիտի, մարման աղբյուրների,
առանձին ցուցանիշների,
համեմատականները կցվում են / համեմատական 2,3,4,5,6/

Համայնքի ղեկավար՝



Ռ. ղազարյան